

Հիրաչ Յագան

Երևանի «Արարատ» ակումբի նախագահ, Հայաստանի հավաքականի նախկին ֆուտբոլիստ

Ծնվել է 03.01.1989 Էտտերբեկ, Բելգիա

Ֆուտբոլային կարիերան սկսել է «Լյերս» ակումբում: Եղել է ակումբի ձևավորման կենտրոնում: Այնուհետև տեղափոխվել է բելգիական «Ստանդարտ», որի կազմում անցկացրել է 4 տարի: Հանդես է եկել Հայաստանի Բերձրագույն առաջնությունում «Գանձասար-Կապանի» կազմում: 3 տարի խաղացել է շվեյցարական «Սերվետի» կազմում: Ներկա պահին խաղում է «Ստադ Լիոն» ակումբում:

Խաղացել է Բելգիայի Մ16 և Մ17 հավաքականների կազմում: Լինելով Բելգիայի քաղաքացի՝ հրավեր է ստացել Հայաստանի Ֆուտբոլի ֆեդերացիայից՝ հանդես գալու Հայաստանի Մ21 հավաքականի կազմում՝ դառնալով նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացի:

2009-2010թթ խաղացել է Հայաստանի Մ-21 և Հայաստանի Ազգային հավաքականների կազմում: Արևմտյան Հայաստանի հավաքականի հիմնադիրն է, որի կազմում 2016թ.-ից ցայսօր խաղում է կիսապաշտպանի դիրքում: Թիմի ավագն է:

2008/09 մրցաշրջանի Բելգիայի առաջնության չեմպիոն է:

Ներկայումս Երևանի «Արարատ» ակումբի նախագահն է:

Արցախի ֆուտբոլային լիգայի հիմնադիր-համանախագահ: Լիգան ղեկավարում է «Արցախ» ՖԱ սեփականատեր Սևան Ասլանյանի հետ միասին:

Ունի ՈւԵՖԱ-ի C+ դիպլոմ

Չճանաչված պետությունների ֆուտբոլի կոնֆեդերացիայի (CONIFA) Եվրոպական ֆուտբոլային ասոցիացիայի անդամ